

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
վիճակագրության պետական խորհրդի նիստի

30.01.2009թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Լ. Խաչատրյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ա. Ավագյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Գ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` չորս հարց.

1. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի՝

2002թ. օգոստոսի 9-ի թիվ 120-Ն, 122-Ն, 123-Ն, 125-Ն, 2002թ. օգոստոսի 12-ի թիվ 148-Ն, 149-Ն, 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 48-Ն, 2004թ. հոկտեմբերի 26-ի թիվ 19-Ն, 20-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու և 2002թ. օգոստոսի 12-ի թիվ 147-Ն և 2005թ. հոկտեմբերի 28-ի թիվ 13-Ն, որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող` Ա. Ավագյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից` 2008թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացված Գյուղական համայնքների հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող` Գ. Մարտիրոսովա/

3. Հաղորդում արտասահմանյան գործողումների հաշվետվությունների մասին.

Հաղորդում Բելոռուսի Մինսկ քաղաքում 08.12.-12.12.2008թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի և Բելոռուսի վիճակագրական պետական կոմիտեի հրավերով “Մարդահամարների և կացարանների հաշվառումների տվյալների մշակման ժամանակակից տեխնոլոգիաները” խորագրով աշխատանքային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող` Գ. Գևորգյան/

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի՝

2002թ. օգոստոսի 9-ի թիվ 120-Ն, 122-Ն, 123-Ն, 125-Ն, 2002թ. օգոստոսի 12-ի թիվ 148-Ն, 149-Ն, 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 48-Ն, 2004թ. հոկտեմբերի 26-ի թիվ 19-Ն, 20-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու և 2002թ. օգոստոսի 12-ի թիվ 147-Ն և 2005թ. հոկտեմբերի 28-ի թիվ 13-Ն, որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող` Ա. Ավագյան/

Որոշեցին՝

առանձին առանձին քվեարկությամբ հաստատել .

• 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն գարնանացանի ընթացքի մասին» Ձև թիվ 3-ԳՏ (տարին երեք անգամ) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 120-Ն,

- 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն մուշտակամորթ զագանաբուծության դրության մասին» Ձև թիվ 26-Գ-Տ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 122-Ն,
- 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն արտադրական կառույցների և շինությունների առկայության մասին» Ձև թիվ 49-Գ-Տ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 123-Ն,
- 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին» Ձև թիվ 6-ՄԵԶ (տարին երեք անգամ) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 125-Ն,
- 2002թ. օգոստոսի 12-ի «Եզրափակիչ հաշվետվություն բերքի տակ կատարված ցանքի հանրագումարները» Ձև թիվ 4-Գ-Տ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 148-Ն,
- 2002թ. օգոստոսի 12-ի «Եզրափակիչ հաշվետվություն բերքի տակ ոռոգվող հողերի վրա կատարված ցանքի հանրագումարները» Ձև թիվ 4-Գ-Տ (հավելված) (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 149-Ն,
- 2003թ. նոյեմբերի 7-ի «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» Ձև թիվ 29-Գ-Տ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 48-Ն,
- 2004թ. հոկտեմբերի 26-ի «Հաշվետվություն գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից ղեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին 200 թ.» Ձև թիվ 29-Գ-Տ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 19-Ն,
- 2004թ. հոկտեմբերի 26-ի «Հաշվետվություն ոռոգվող հողերի վրա կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից ղեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին 200 թ.» Ձև թիվ 29-Գ-Տ (հավելված) (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 20-Ն որոշումներում կատարված փոփոխությունները և ուժը կորցրած ճանաչել`
- 2002թ. օգոստոսի 12-ի «Տեղեկանք գյուղական վայրերի բնակչության անասուններով ապահովվածության մասին» ձև թիվ 9-Գ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին» թիվ 147-Ն,
- 2005թ. հոկտեմբերի 28-ի «Անասունների հաշվառման հանրագումարների մասին» Ձև թիվ 6-Գ-Տ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին» թիվ 13-Ն, որոշումները:

/Նորմատիվ/

/Բլեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից` 2008թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացված Գյուղական համայնքների հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան «Հագարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող` Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին`

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին` «Հագարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացված Գյուղական համայնքների հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան` զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

/Բլեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.
Հաղորդում Բելոռուսի Մինսկ քաղաքում 08.12.-12.12.2008թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպայի
Տնտեսական Հանձնաժողովի և Բելոռուսի վիճակագրական պետական կոմիտեի հրավերով
“Մարդահամարների և կացարանների հաշվառումների տվյալների մշակման ժամանակակից
տեխնոլոգիաները” խորագրով աշխատանքային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ